ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան **«06» հուլիսի 2022թ.**

ՀՐԱՄԱՆ № 269-Ա

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԳՍԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ՊԱՇՏՈՆԻ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 41-27.1-Մ2-2) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ, 151-րդ կետերը, ինչպես նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ2-2) թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 30-ի եզրակացությունը և Ռոբերտ Մնացականյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ռոբերտ Սարգսի Մնացականյանին նշանակել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչության հայտարարագրման բաժնի գլխավոր մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 41-27.1-Մ2-2) պաշտոնին:
2. Ռոբերտ Մնացականյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:
3. Աշխատանքի անցնելու սկիզբը՝ 2022 թվականի օգոստոսի 04:

Պարտականությունները կատարող՝ **Նարինե Մկրտչյան**